Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ

2026

Բովանդակություն

1. Սահմանումներ և հապավումներ 3
2. Ներածություն 4
3. ԲՍԿՀ ակնարկ 4
4. ԲՍ քաղաքականություն 4
5. ԲՍ ստանդարտներ 5
6. ԲՍԿՀ ներդրման պարտականությունները 5
7. Ազատման ցանկ 6
8. Բացառությունների ցանկ 7
9. ԲՍ պատշաճ ուսումնասիրություն 9
10. Հավելված 1 11
11. Հավելված 2 13
12. Հավելված 3 14

1. Սահմանումներ և հապավումներ

Բանկ - "ԷՎՈԿԱԲԱՆԿ" ԲԲԸ

Հաճախորդ – Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն օգտվում է Բանկի կողմից առաջարկվող ծառայություններից կամ հանդիսանում է Բանկի համար պոտենցիալ վարկառու

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

Նախագիծ - Բանկի կողմից վերանայված հաճախորդների վարկային դիմումներ

ԲՍ - Բնապահպանական և սոցիալական

ԲՍԿՀ - Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ

ԲՍԱԳ - Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում

ԲՍԳԾ - Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր

ԲԼՄ – Բողոքների լուծման մեխանիզմ

2. Ներածություն

Էվոկաբանկը հանձնառու է խթանել կայուն զարգացումը և պատասխանատու բանկային գործելակերպը՝ ինտեգրելով ԲՍ գործոնները իր գործառնությունների մեջ: Բանկը գիտակցում է իր գործունեության հնարավոր ազդեցությունը համայնքների և շրջակա միջավայրի վրա: Ազդեցությունները մեղմելու համար Բանկը մշակել է այս փաստաթուղթը՝ իր ֆինանսավորման և ներդրումային գործունեության հետ կապված ԲՍ ռիսկերը հայտնաբերելու և կառավարելու համար: ԲՍԿՀ-ն գործնական ուղեցույց է, որը օգնում է Բանկին ճանաչել շրջակա միջավայրի խնդիրների հետ կապված ռիսկերն ու հնարավորությունները, նպաստում է հիմնական գործընթացների մեջ ինտեգրել կայունությունը և համապատասխանում է ազգային կարգավորող պահանջներին և միջազգային լավագույն փորձին:

3. ԲՍԿՀ ակնարկ

ԲՍԿՀ նպատակն է բացահայտել ֆինանսավորվող նախագծերում հնարավոր ԲՍ խնդիրները, վերահսկել մեղմացնող միջոցառումների գործընթացը և լուծել նախագծի իրականացման ընթացքում առաջացած խնդիրները: Այն ապահովում է, որ բացասական ազդեցությունները նվազագույնի հասցվեն և խթանվեն դրական արդյունքները: ԲՍԿՀ-ի միջոցով Բանկը նպատակ ունի բարձրացնել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը որպես պատասխանատու ֆինանսական հաստատություն:

ԲՍԿՀ-ն ունի երեք հիմնական բաղադրիչներ: Դրանք են՝

- ԲՍ քաղաքականություն,
- ԲՍ ստանդարտներ,
- Պատշաճ ուսումնասիրություն (due diligence), որը ներառում է՝
  - i. ռիսկի ստուգում և դասակարգում,
  - ii. գնահատում և մոնիթորինգ,
  - iii. կողմերի ներգրավման և բողոքների արձագանքման մեխանիզմ:

4. ԲՍ քաղաքականություն

Այս քաղաքականությունն արտացոլում է ԲՍ ռիսկերի և հնարավորությունների բացահայտման, գնահատման և կառավարման կարևորությունը Բանկի գործունեության և ֆինանսավորման ողջ ընթացքում: Այն վերաբերում է Բանկի կողմից իրականացվող վարկային և ներդրումային ամբողջ գործունեությանը, ներառյալ կորպորատիվ և ՓՄՁ վարկավորումը, առևտրի ֆինանսավորումը և նախագծերի ֆինանսավորումը: Այն ընդգրկում է վարկավորման ողջ ընթացքը՝ սկսած տրամադրումից մինչև մարում և մոնիթորինգ, և վերաբերում է այս գործունեությամբ զբաղվող բոլոր աշխատակիցներին, հաճախորդներին և երրորդ կողմի գործակալներին:

1) Բնապահպանական պարտավորություններ

Բանկը պետք է.

- Ապահովի կիրառելի ազգային բնապահպանական օրենքների և կանոնակարգերի պահպանումը:
- Խթանի ռեսուրսների (էներգիայի, ջրի և այլ ռեսուրսների) արդյունավետ օգտագործումը:

- Աջակցի ջերմոցային գազերի արտանետումների (ՋԳ) կրճատմանը և կլիմայական ռիսկերի մեղմացմանն ուղղված գործողություններին:
- Կանխի կամ նվազագույնի հասցնի աղտոտիչների արտանետումը օդ, ջուր և հող:

2) Աշխատանք և աշխատանքային պայմաններ

Բանկը պահանջում է, որ իր հաճախորդները և գործընկերները.

- Ապահովեն արդար աշխատանքային պայմաններ:
- Կանխեն աշխատավայրում ոտնձգությունները, չարաշահումները և սեռական բռնությունը:
- Անհրաժեշտության դեպքում կիրառեն աշխատողների բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ:
- Արգելեն երեխաների և հարկադիր աշխատանքը:

3) Համայնքի առողջություն, անվտանգություն և պաշտպանվածություն

Բանկը կարևորում է ֆինանսավորվող նախագծերից ազդեցություն կրող համայնքների անվտանգությունն ու բարեկեցությունը՝ պահանջելով հաճախորդներից.

- Գնահատել և կառավարել համայնքի առողջության և անվտանգության ռիսկերը:
- Կանխել հարկադիր վերաբնակեցումը և շրջակա համայնքներին ազդող միջադեպերը:
- Ստեղծել բողոքարկման մեխանիզմներ՝ ԲՍ բողոքները լուծելու համար:

5. ԲՍ ստանդարտներ

ԲՍ քաղաքականության արդյունավետ իրականացման և պահանջներին բավարար համապատասխանություն ապահովելու համար Բանկը ընդունում և կիրառում է ՄՖԿ-ի (IFC) կատարողական ստանդարտները (Performance Standards), որոնք համապատասխանում են միջազգային լավագույն փորձին և ենթակա են համընդհանուր կիրառման մնացած դոնորների շրջանակում (Հավելված 1): Յուրաքանչյուր ստանդարտի արդիականությունը կախված է նախագծի բնույթից և մասշտաբից: Երբ նախագծերում ներգրավված են դոնորներ կամ ներդրումային ֆոնդեր, Բանկը կարող է կիրառել նրանց ԲՍ ստանդարտները՝ համակարգված կերպով որոշելու համար, թե որ ստանդարտներն ունեն առաջնահերթություն:

6. ԲՍԿՀ ներդրման պարտականությունները

ԲՍԿՀ պահանջները ընդգրկված են Բանկի ռիսկերի կառավարման ընթացակարգերում: Պատասխանատվությունները բաշխված են Բանկի և հաճախորդների միջև, ինչպես նշված է ստորև.

1) Բանկի պարտականությունները .

Հետևելով ԲՍԿՀ-ին Բանկը ցույց է տալիս իր հանձնառությունը՝ կառավարելու ԲՍ ռիսկերը յուրաքանչյուր նախագծի շրջանակներում: Բանկը մշակել է ներքին **«Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման» կարգ,** որը սահմանում է քայլ առ քայլ պարտականությունները, աշխատանքային գործընթացները և գործիքները՝ ԲՍԿՀ-ն գործարկելու համար:

Բանկը պատասխանատու է.

- Ստուգում իրականացնել՝ հաստատելու համար, որ նախագիծը չի ներառում Բացառությունների ցանկում թվարկված որևէ արգելված գործունեություն:

- Սահմանել այն ԲՍ պահանջները, որոնք հաճախորդները պետք է պահպանեն նախագծի իրականացման ընթացքում:
- Բոլոր ֆինանսավորման համաձայնագրերում ներառել ԲՍ կովենանտներ, որպեսզի նախագծերը համապատասխանեն ՀՀ օրենքներին և ԲՍԿՀ պահանջներին:
- Գնահատման գործընթացի շրջանակներում ԲՍ ուսումնասիրություն անցկացնել: Սա ներառում է ԲՍ ռիսկերի գնահատում և դասակարգում, ինչպես նաև հնարավոր ազդեցությունը մեղմելու համար համապատասխան գործողությունների ծրագրերի մշակում (ԲՍԳԾ): ԲՍԳԾ ձևանմուշը տեղադրված է Հավելված 2-ում:
- Կանոնավոր մոնիթորինգ իրականացնել՝ նախագծի ԲՍ ռիսկի դասի հիման վրա:

Կախված նախագծից և դրա ռիսկի դասից, ուսումնասիրությունը կարող է տատանվել հիմնական ստուգումից մինչև տեխնիկական փորձագետի կամ խորհրդատուի կողմից իրականացվող համապարփակ ուսումնասիրություն:

2) Հաճախորդի պարտականությունները

Հաճախորդները պատասխանատու են.

- Համապատասխանել ԲՍ պահանջներին: Եթե լիարժեք համապատասխանություն չի ցուցադրվում, ապա պետք է իրականացնել և պատշաճ կերպով ավարտել Բանկի կողմից հաստատված ԲՍԳԾ-ում նշված բոլոր միջոցառումները:
- Ապահովել կողմերի հետ համապատասխան ներգրավվածություն, ներառյալ նախագծից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցություն կրողները:
- Երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում Բանկին տեղեկացնել ցանկացած լուրջ ԲՍ միջադեպի մասին, որը կարող է էական ազդեցություն ունենալ նրա գործունեության կամ հասարակության վրա: ԲՍ միջադեպերի հաշվետվության ձևանմուշը տեղադրված է Հավելված 3-ում:

7. Ազատման ցանկ

Միայն հետևյալ գործունեությունները ներառող նախագծերն են ազատված ԲՍ կառավարման համակարգի (ԲՍԿՀ) լիարժեք ստուգումից.

- Գիտելիքների պատրաստում և տարածում:
- Կարողությունների զարգացման միջոցառումների կազմակերպում, ինչպիսիք են աշխատաժողովները և վերապատրաստումները:
- Գործընկերների կարողությունների ամրապնդում՝ ազգային և միջազգային քաղաքականության գործընթացներին մասնակցելու համար:
- Գործընկերության համակարգում և ցանցի կառավարում, և/կամ:
- Գլոբալ/տարածաշրջանային/ազգային գործունեություն (օրինակ՝ գիտելիքների կառավարում, միջկառավարական գործընթացներ)՝ առանց դաշտային մակարդակի գործունեության:

Սրանք կիրառվում են միայն այն դեպքում, եթե գործունեությունը ներառում է նախագծի ամբողջ շրջանակը:

8. Բացառությունների ցանկ

Բանկը չի ֆինանսավորում հետևյալ գործունեությունները.

- Ցանկացած ապրանքների արտադրություն կամ վաճառք կամ այնպիսի գործունեություն, որոնք Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ միջազգային կոնվենցիաներով և համաձայնագրերով համարվում են անօրինական կամ առկա են միջազգային արգելքներ, ինչպիսիք են վտանգավոր դեղորայքը, թունաքիմիկատները, օզոնային շերտը քայքայող նյութերը, պոլիքլորինացված դիֆենիլ (PCBs) պարունակող նյութերը, վայրի բնության տարրերն ու CITES կոնվենցիայով կարգավորվող կենդանիները, բույսերը:
- Զենք զինամթերքի արտադրություն կամ առևտուր[1]:
- Ալկոհոլային խմիչքների արտադրություն կամ առևտուր (բացառությամբ գարեջրի և գինու)[1] Ֆինանսավորող կազմակերպության ռեսուրսներով: Սեփական ռեսուրսներով ֆինանասավորելու դեպքում չպետք է գերազանցի վարկային պորտֆելի 5%-ը:
- Ծխախոտի արտադրություն կամ առևտուր[1]:
- Մոլախաղեր, խաղատներ և նմանատիպ գործունեություն[1]:
- Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ առևտուր: Սա չի տարածվում բժշկական սարքավորումների, որակի վերահսկման (չափման) սարքավորումների և այն սարքավորումների վրա, երբ Բանկը համարում է, որ ռադիոակտիվ աղբյուրը չնչին է և (կամ) պատշաճ կերպով պաշտպանված:
- Անսահմանափակ ասբեստի մանրաթելերի արտադրություն կամ առևտուր: Սա չի տարածվում կապակցված ասբեստի ցեմենտի թերթերի գնման և օգտագործման վրա, երբ ասբեստի պարունակությունը 20% -ից պակաս է:
- Ջրային միջավայրում ցանցային ձկնորսությունը՝ օգտագործելով 2.5 կմ-ից ավելի երկարություն ունեցող ցանցեր:
- Արտադրություն կամ գործունեություն, որոնք կապված են հարկադիր աշխատանքի վնասակար կամ շահագործելի ձևերի հետ[2] (երեխայի ներգրավմամբ վնասակար աշխատանք)[3]:
- Առևտրային անտառահատման գործունեություն արևադարձային խոնավ անտառներում:
- Փայտի կամ այլ անտառային տնտեսության արտադրանքի արտադրություն կամ առևտուր, բացի կայուն կառավարվող անտառներից:
- Վտանգավոր քիմիական նյութերի նշանակալի ծավալների արտադրություն, առևտուր, պահեստավորում կամ տեղափոխում, կամ առևտրային ծավալներով օգտագործում: Վտանգավոր քիմիական նյութերի թվում են բենզինը, կերոսինը և այլ նավթամթերքներ, եթե Ֆինանսավորող կազմակերպության ռեսուրսներն են: Սեփական ռեսուրսներով ֆինանասավորելու դեպքում չպետք է գերազանցի վարկային պորտֆելի 5%-ը:

---

[1] *Սա չի տարածվում ծրագրի հովանավորների վրա, ովքեր էականորեն ներգրավված չեն այդ գործունեության մեջ: «Էականորեն ներգրավված չէ» նշանակում է, որ տվյալ գործունեությունը օժանդակ է նախագծի հովանավորի հիմնական գործունեությանը:*

[2] *Հարկադիր աշխատանք նշանակում է այն աշխատանքը կամ ծառայությունը, որը կամավոր չի կատարվել, որը կատարվում է բռնության կամ տույժի սպառնալիքի տակ:*

[3] *Նշանակում է երեխաների զբաղվածություն, որոնք տնտեսապես շահավետ են, սակայն կարող են վտանգավոր լինել կամ խանգարել երեխայի կրթությանը կամ վնասել երեխայի առողջությանը, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացմանը:*

- Արտադրություն կամ գործունեություն, որը խախտում է բնիկ ժողովուրդների սեփականության կամ դատական կարգով պահանջվող հողերի նկատմամբ ունեցած իրավունքները՝ առանց այդ ժողովուրդների լիարժեք փաստաթղթավորված համաձայնության:
- Ածխի ոլորտի հետ կապված գործունեություններ:
- Գործունեություն, որը կհանգեցնի հարկադիր վերաբնակեցման:
- Ցանկացած գործունեություն, որը պարունակում է էական ռիսկեր կամ ազդեցություններ շրջակա միջավայրի, համայնքային անվտանգության և առողջության վրա:
- Գործունեություն, որը բացասաբար կազդի կենսաբազմազանության և մշակութային ժառանգության վրա և կհանգեցնի էական կրճատումների:
- Աշխատանքի ժամանակ անվտանգության և առողջության վրա ազդող էական ռիսկեր պարունակող գործունեություն:

9. ԲՍ պատշաճ ուսումնասիրություն

Բանկի պատշաճ ուսումնասիրության գործընթացն իրականացվում է համաձայն **«Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման»** կարգի և ներառում է նախագծի դասակարգում, ԲՍ գնահատում և մոնիթորինգ, ինչպես նաև կողմերի ներգրավում, ներառյալ բողոքների լուծման մեխանիզմները:

ԲՍ ռիսկերի սկրինգում և դասակարգում

- Ա դաս. դրանք նախագծերն են, որոնք ամենայն հավանականությամբ կունենան անբարենպաստ ազդեցություններ, որոնց մեծ մասը անդառնալի են (օր.՝ հանգեցնում են հիմնական բնական միջավայրի կորստին), կարող են ազդել խոցելի խմբերի կամ էթնիկ փոքրամասնությունների վրա, ընդգրկել տեղահանություն և վերաբնակեցում կամ ազդեցություն ունենալ մշակութային ժառանգության նշանակալի օբյեկտների վրա: Ա դասի բոլոր նախագծերի համար իրականացվում է ԲՍԱԳ և կազմվում է ԲՍԳԾ՝ վերոնշյալ բացասական ազդեցությունները կանխելու կամ մեղմելու նպատակով:
- Բ դաս. դրանք նախագծերն են, որոնք բացասաբար են անդրադառնում ԲՍՄ վրա, բայց այդ ազդեցությունները մեծ չեն և հետևանքներից որոշներն են անդառնալի: Այս նախագծերը կարող են շրջակա միջավայրի վրա հատուկ ազդեցություններ ունենալ, բայց այդ ազդեցությունները բնորոշ են տեղանքին և նշանակալի չեն, կամ դրանցից որևէ մեկն է անդառնալի: Անբարենպաստ ազդեցությունները հնարավոր է կրճատել լավ մշակված միջոցառումների միջոցով: Այս նախագծերում բացակայում է հարկադիր վերաբնակեցումը:
- Գ դաս. այս նախագծերը ամենայն հավանականությամբ, կունենան շրջակա միջավայրի նվազագույն կամ ոչ բացասական ազդեցություն: Այս նախագծերում բացակայում է հարկադիր վերաբնակեցումը կամ համայնքների վրա վատ ազդեցությունը: Հետագա բնապահպանական գնահատում չի պահանջվում:

Բ և Գ դասերի նախագծերում ԲՍԳԾ-ի առկայությունը կախված է նախագծի բարդությունից և հնարավոր ԲՍ ազդեցությունից:

Գնահատում և մոնիթորինգ

Իրականացվում են հաճախորդների համար՝ մեղմացման սկզբունքներին հետևելու և հնարավոր ազդեցություններից ու ռիսկերից խուսափելու համար: Սրանք կարելի է իրականացնել պատշաճ նախագծման և ԲՍ ռիսկերի մանրակրկիտ ստուգման միջոցով:

- Ա դաս. այս նախագծերի համար մոնիթորինգն իրականացվում է կիսամյակային կտրվածքով՝ արտաքին փորձագետի աջակցությամբ, խստորեն ապահովելով, որ ԲՍԳԾ-ն պատշաճ կերպով իրականացվի սահմանված ժամկետներում: Ա դասի նախագծերի համար հաճախորդներին այցելությունները պարտադիր են:
- Բ դաս. այս նախագծերի համար մոնիթորինգն իրականացվում է տարին մեկ անգամ: Այնուամենայնիվ, եթե մշակվել է ԲՍԳԾ, մոնիթորինգը պետք է տեղի ունենա գործողությունների ծրագրում սահմանված ժամկետից հետո մեկ ամսվա ընթացքում:
- Գ դաս. այս նախագծերի համար մոնիթորինգն իրականացվում է, եթե պատրաստվել

է ԲՍԳԾ: Մոնիթորինգն իրականացվում է ԲՍԳԾ-ի վերջնաժամկետից հետո մեկ ամսվա ընթացքում:

Մոնիթորինգի հաճախականությունը կարող է փոփոխվել՝ կախված նախագծի ռիսկի մակարդակից և հաճախորդի կատարողականից:

Կողմերի ներգրավում և բողոքարկման մեխանիզմ

Կողմերի ներգրավումը շարունակական գործընթաց է, որը նպաստում է ԲՍ ռիսկերի թափանցիկ և պատասխանատու կառավարմանը: Բանկը համագործակցում է իր շահագրգիռ կողմերի (աշխատակիցներ, հաճախորդներ, ներդրողներ, կարգավորող մարմիններ և հանրություն) հետ՝ ԲՍ հանձնառությունների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և շարունակական հետադարձ կապ և բարելավում ապահովելու համար:

Ինչ վերաբերում է ֆինանսավորվող գործունեություններին, Բանկը պահանջում է, որ հաճախորդները պահպանեն կողմերի ներգրավվածությունը նախագծի ողջ ընթացքում: Վաղ փուլում կողմերի ներգրավումը օգնում է հասցեագրել հնարավոր մտահոգությունները և ուժեղացնում է նախագծի արձագանքելու կարողությունը ազդեցություն կրող համայնքներին և կողմերին: Կողմերի ներգրավման գործընթացը ներառում է.

1. Կողմերի նույնականացում և վերլուծություն
2. Կողմերի հետ համագործակցելու ծրագիր
3. Խորհրդակցություն կողմերի հետ

Կողմերի ներգրավման միջոցառումները պետք է աշխատեն խնդիրները բացահայտելու և լուծելու ուղղությամբ նախքան դրանց բողոքների վերածվելը: Բողոքը հարց է, մտահոգություն, խնդիր կամ պահանջ, որը անհատը կամ համայնքային խումբը ցանկանում է, որ հաճախորդը հասցեագրի և լուծի: Սա կարող է ներառել նախագծի ազդեցության, վնասների կամ գործունեության վերաբերյալ բողոքներ: ԲԼՄ-ն դիտարկում է բոլոր տեսակի բողոքները, տեղեկացնում կողմերին մեխանիզմի մասին և ժամանակին լուծում խնդիրները: Բանկը սահմանել է **«Հաճախորդների կողմից ներկայացված բողոքների կառավարման» կարգը,** որի միջոցով Բանկը ստանում է հաճախորդի կողմից բարձրացրած բողոքը, ուսումնասիրում այն և ուղարկում պատասխանը:

10. Հավելված 1

PS 1 - ԲՍ ռիսկերի և ազդեցության գնահատում և կառավարում

Կենտրոնանում է ԲՍ ռիսկերի և ազդեցությունների գնահատման և կառավարման վրա: Այն պահանջում է, որ հաճախորդները մշակեն և ներդնեն ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան շարունակաբար բացահայտել, մեղմացնել և վերահսկել հնարավոր ԲՍ խնդիրները: Այս ստանդարտը սահմանում է կողմերի ներգրավման, ազդեցության գնահատման և նախագծի ողջ ընթացքում կատարողականի կանոնավոր վերանայման անհրաժեշտությունը:

PS2 - Աշխատանք և աշխատանքային պայմաններ

Անդրադառնում է աշխատանքին և աշխատանքային պայմաններին: Այն ընդգծում է արդար վերաբերմունքի, խտրականության բացառման և անվտանգ ու առողջ աշխատանքային միջավայրի կարևորությունը: Ստանդարտը ներառում է դրույթներ զբաղվածության պայմանների, երեխաների և հարկադիր աշխատանքի կանխարգելման, աշխատանքային առողջության, անվտանգության և աշխատողների համար բողոքարկման մեխանիզմների հասանելիության վերաբերյալ:

PS3 - Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում

Վերաբերում է ռեսուրսների արդյունավետության և աղտոտման կանխարգելմանը: Այն խրախուսում է նախագծերը՝ արդյունավետորեն օգտագործել այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են էներգիան ու ջուրը, և նվազագույնի հասցնել արտանետումները, թափոնները և վտանգավոր նյութերը: Նպատակն է նվազեցնել աղտոտվածությունը և խթանել բնական ռեսուրսների կայուն օգտագործումը:

PS4 - Համայնքի առողջություն, անվտանգություն և պաշտպանվածություն

Անդրադառնում է համայնքի առողջությանը, անվտանգությանը և պաշտպանվածությանը: Այն ձգտում է պաշտպանել տեղական համայնքները նախագծի գործունեությունից բխող ռիսկերից և ազդեցություններից: Շեշտը դրվում է նախաձեռնողական ռիսկերի կառավարման և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության վրա:

PS5 - Հողի ձեռքբերում և հարկադիր վերաբնակեցում

Վերաբերում է հողի ձեռքբերմանը և հարկադիր վերաբնակեցմանը: Այն ապահովում է, որ անխուսափելի տեղահանումը կառավարվի այնպիսի գործընթացի միջոցով, որը վերականգնում կամ բարելավում է ազդեցություն կրած մարդկանց կենսապահովման միջոցները և կենսապայմանները: Ստանդարտը պահանջում է արդար փոխհատուցում, կենսապահովման վերականգնում և կողմերի հետ շարունակական խորհրդակցություններ վերաբնակեցման պլանավորման և իրականացման ընթացքում:

PS6 - Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում

Խթանում է կենսաբազմազանության պահպանումը և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարումը: Այն պահանջում է, որ նախագծերը խուսափեն կամ նվազագույնի հասցնեն կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների վրա

ազդեցությունը, մասնավորապես՝ զգայուն կամ օրենքով պաշտպանված տարածքներում: Այն նաև խթանում է կայուն գործելակերպերը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, անտառատնտեսությունը և ձկնորսությունը:

PS7 - Բնիկ ժողովուրդներ

Պաշտպանում է նախագծից տուժած բնիկ ժողովուրդների իրավունքները: Այն պարտադրում է ազատ, նախնական և տեղեկացված համաձայնություն (FPIC) այն նախագծերի համար, որոնք ազդում են նրանց հողերի կամ ռեսուրսների վրա, և կոչ է անում մշակութային առումով համապատասխան զարգացման օգուտներ ապահովել: Ստանդարտը շեշտում է բնիկ ժողովուրդների իրավունքների և ավանդույթների հանդեպ հարգանքը:

PS8 – Մշակութային ժառանգություն

Կենտրոնանում է մշակութային ժառանգության վրա: Այն ձգտում է պահպանել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական մշակութային ռեսուրսները, որոնք կարող են ազդվել նախագծից: Սա ներառում է հնագիտական վայրեր, հուշարձաններ և սրբավայրեր: Նախագծերը պետք է խուսափեն կամ մեղմեն մշակութային ժառանգության վրա ցանկացած բացասական ազդեցություն և համագործակցեն համապատասխան համայնքների և իշխանությունների հետ:

11. Հավելված 2

ԲՍԿՀ չափանիշ	Որո՞նք են խնդիրները:	Ի՞նչ ուղղիչ քայլեր են կիրառվելու:	Գործողությունների իրականացման վերջնաժամկետ	Պատասխանատու անձ
Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարում				
Աշխատանք և աշխատանքային պայմաններ				
Ռեսուրսների արդյունավետ օգտագործում և աղտոտվածության կանխարգելում				
Համայնքային առողջապահություն, անվտանգություն և ապահովություն				
Հողերի ձեռքբերում և հարկադրված վերաբնակեցում				
Կենսաբազմազանության պահպանում և բնական ռեսուրսների կայուն կառավարում				
Տեղաբնիկ ժողովուրդներ				
Մշակութային ժառանգության պահպանում				

12. Հավելված 3

Բաժին	**Լրացվող տվյալներ հաճախորդի կողմից**
Նպատակ: Այս ձևը օգտագործվում է Հաճախորդի կողմից՝ Բանկին իրազեկելու ցանկացած լուրջ բնապահպանական կամ սոցիալական (ԲՍ) միջադեպի մասին՝ համաձայն վարկային պայմանագրի: Այն պետք է ներկայացվի **միջադեպից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում**:	
Ընդհանուր տվյալներ	Հաշվետվության ամսաթիվը: Ներկայացնող անձի անուն, ազգանուն և պաշտոն: Կոնտակտային տվյալներ: Պայմանագրի հղում:
Միջադեպի մանրամասներ	Միջադեպի ամսաթիվ և ժամանակ: Վայր:
Միջադեպի տեսակ	☐ Մահվան ելք ☐ Ծանր վնասվածք կամ հիվանդություն ☐ Երեխաների կամ հարկադիր աշխատանք ☐ Լուրջ բնապահպանական վնաս (օր.՝ հրդեհ, չվերահսկվող արտանետումներ) ☐ Համայնքի առողջության, անվտանգության կամ ապահովության վրա նշանակալի ազդեցություն ☐ Հարկադիր տեղահանում ☐ Այլ (նշել): _____
Ազդեցության գնահատում	Տուժած անձանց քանակը: Բնապահպանական վնասի չափը (եթե կա): Կարգավորող մարմիններին ծանուցե՞լ եք: ☐ Այո ☐ Ոչ Եթե այո, նշեք մանրամասները:
Անմիջական ձեռնարկված միջոցառումներ	*(Նկարագրեք այն միջոցառումները, որոնք ձեռնարկվել են միջադեպից անմիջապես հետո վնասը կամ ռիսկը վերացնելու համար)*
Հաջորդ քայլեր / Վերականգնման միջոցառումներ	*(Նկարագրեք այն քայլերը, որոնք նախատեսվում են ձեռնարկել միջադեպի կրկնությունը կանխելու և ազդեցությունները մեղմելու համար)*
Նպաստող ապացույցներ	☐ Լուսանկարներ կցված են ☐ Այլ փաստաթղթեր կցված են (նշել):
Ստորագրություն	Անուն, ազգանուն և ստորագրություն: Ամսաթիվ: